Հայտարարություն
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Հավելված 47
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
Հախարարության գլխավոր քարտուղարի
2020 թ. սեպտեմբերի 24-ի N 609-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչության սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (այսուհետ՝ բաժնի պետ (ծածկագիր՝ 18-34.16-Ղ4-4)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1.Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) Ապահովում է օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ աշխատանքները,
2) Ապահովում է բարձրագույն սպորտի բնագավառում հայեցակարգերի ու պետական նպատակային ծրագրերի մշակումը և իրականացնումը,
3) Ապահովում է հաջորդ տարվա Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի նախագծի մշակումը,

4) Ապահովում է միջազգային միջգերատեսչական պայմանագրերի մշակումը, օրենքով սահմանված կարգով մասնակցում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը,
5) Ապահովում է բարձրագույն սպորտի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծրագրերի իրականացումը,
6) Ապահովում է միջազգային սպորտի համագործակցության նպատակով սպորտային պատվիրակությունների և անհատ մարզիկների օտարերկրյա պետություններ գործուղմանը, աջակցում է միջազգային սպորտային համագործակցության և փոխանակումների զարգացմանը,
7) Ապահովում է համահայկական մարզական բնույթի ծրագրերի մշակման աշխատանքները,
8) Ապահովում է ծառայությունների շուկայի վերլուծությունը ֆիզիկական կուլտուրայի, սպորտի բնագավառներում,
9) Ապահովում է բարձրագույն սպորտի բնագավառում պետական նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի ծրագրերի մշակումը,
10) Ապահովում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների ծրագրերի մշակումը,
11) Ապահովում է վարչական վիճակագրական հաշվետվությունների վարման համակարգը
12) Ապահովում է բարձրագույն սպորտի բնագավառում քաղաքականության վերլուծությունը, քաղաքականության ռազմավարության, հայեցակարգերի և նպատակային ծրագրերի մշակումը և իրականացնում դրանց մոնիթորինգը,
13) Ապահովում է՝ սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու, անձնագրերի գործողության ժամկետի երկարացման և պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու հետ կապված փաթեթների կազմումը.
14) Ապահովում է՝ պետական աջակցության ծրագրում ընդգրկված մարզաձևերի ֆեդերացիաների և Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի համագործակցության աշխատանքները:

Իրավունքները՝

- մարզական կազմակերպություններից, անկախ նրանց գերատեսչական պատկանելիությունից, պարբերաբար պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ,
- պետական բյուջեի նախագծի մշակման համար Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեից և մարզաձևերի ֆեդերացիաներից պահանջելու՝ մարզական միջոցառումների օրացուցային պլաններ, նախահաշիվներ, հայտեր

համապատասխան հիմնավորումներով կանոնակարգեր,

- Վարչության իրավասության սահմաններում քննարկվող հարցերի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, հրավիրել խորհրդակցություններ և մասնագիտական քննարկումներ:
- հավաքագրել սպորտի բնագավառի վաստակաշատ անձանց պետական և այլ պարգևներով պարգևատրելու, պատվավոր կոչումներ շնորհելու, ինչպես նաև մարզիկներին մարզական կոչումներ շնորհելու, բնագավառի առաջավորներին և կազմակերպություններին մեդալներով, մրցանակներով ու դիպլոմներով պարգևատրելու համար փաստաթղթեր,
- վերահսկողություն իրականացնել բարձրագույն սպորտի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացման նկատմամբ.
- պահանջել միջազգային սպորտի համագործակցության նպատակով սպորտային պատվիրակությունների և անհատ մարզիկների օտարերկրյա պետություններ գործուղելու համար մարզական կազմակերպություններից գործուղման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի փաթեթները.
- պահանջել մարզական ֆեդերացիաներից յուրաքանչյուր տարվա կտրվածքով բարձր նվաճումների հասած մարզիկների և նրանց մարզիչների վերաբերյալ տեղեկատվություն, բարձրագույն սպորտի աշխատանքների վիճակագրական հաշվառում իրականացնելու համար
- պահանջել միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու նպատակով մազական ֆեդերացիաներից տեղեկատվություն հարևան երկրների մարզական ֆեդերացիաների գործունեության վերաբերյալ,
- պահանջել բարձրագույն սպորտի բնագավառում պետական նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի տեղեկատվություն,
- նախապատրաստել Վարչության լիազորությունների շրջանակներում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- ներկայացնել ըստ անհրաժեշտության, համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առընչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին:

Պարտականությունները՝

- Ուսումնասիրել և վերլուծել ոլորտի զարգացման հեռանկարային միտումները, մշակել քաղաքականության իրականացման հայեցակարգային և ռազմավարական մոտեցումներ:
- ընդհանրացնել իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնել առաջարկություններ բարձրագույն սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.
- կազմակերպել միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցությունը,
- բնագավառի վաստակաշատ անձանց պետական պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների ներկայացման համար փաստաթղթերի հավաքագրումը,

- մարզական կոչումների և կարգերի, հանրապետական առաջնությունների մրցանակակիրներին, բնագավառի նվիրյալներին և կազմակերպություններին՝ մեդալներով ու դիպլոմներով պարգևատրելու համար ներկայացման փաստաթղթերի հավաքագրումը,
- կազմակերպում է քաղաքացիների նամակներում (դիմումներն ու բողոքները) արծարծված հարցերի քննարկումը,
- համապատասխան ռեգիստրների միջոցով վարել բարձրագույն սպորտի բնագավառում վարչական վիճակագրությունը,
- Բյուջեի նախագծի մշակման նպատակով ուսումնասիրել, վերլուծել և ամփոփել ՀԱՕԿ-ից, մարզական ֆեդերացիաներից հավաքագրված փաստաթղթերը:
- Բնագավառի վաստակաշատ անձանց պետական պարգևների և պատվավոր կոչումների ներկայացման համար մարզական կազմակերպություններից ստացված տվյալները համեմատել գործող չափորոշիչների հետ, ուսումնասիրել, վերլուծել և ամփոփել այն:
- Ներկայացնել պարբերաբար տեղեկատվություն բարձրագույն սպորտի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացման վերաբերյալ:
- Միջազգային սպորտի համագործակցության նպատակով սպորտային պատվիրակությունների և անհատ մարզիկների օտարերկրյա պետություններ գործուղելու համար մարզական կազմակերպություններից ստացած փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրել, ամփոփել և ներկայացնել եզրակացություն գործուղման վերաբերյալ:
- Բարձրագույն սպորտի աշխատանքների վիճակագրական հաշվառումը ապահովելու նպատակով մարզական ֆեդերացիաների ներկայացրած տվյալները ուսումնասիրրել, ամփոփել և ներկայացնել լուսաբանման:
- Միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու նպատակով ուսումնասիրել և ամփոփել մարզական ֆեդերացիաներից ստացված տեղեկատվությունը և ներկայացնել զեկույց:
- Բարձրագույն սպորտի բնագավառում պետական նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի ծրագրերի մշակման համար սպորտային կազմակերպություններից ստացած նյութերը ուսումնասիրել, ամփոփել և ներկայացնել ծրագրերի նախագիծ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սպորտի կամ ֆիզիկական կուլտուրայի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում

2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: